

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր N _____

« _____ » _____ 20__ թ.

ք. Վանաձոր

«Վանաձորի Հ.թունանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ (հետագայում՝ «Համալսարան»), որը գործում է իր կանոնադրության հիման վրա թիվ _____ լիցենզիայով, ի դեմս ռեկտորի Ռուստամ Ռաֆիկի Սահակյանի մի կողմից, և մյուս կողմից _____ (հետագայում՝ «Ուսանող»)

(անուն, հայրանուն, ազգանուն)

կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՈՍՐԿԱՆ

1.1. Համալսարանը Ուսանողին՝ _____ թ. ծնված _____ (անուն, հայրանուն, ազգանուն) անձնագիր _____ բնակվում է _____ (հասցե)

հրամանագրում է պետական չափորոշիչով մագիստրոսի հիմնական կրթական ծրագրով 2 տարի առկա

ուսման տևողությամբ (« _____ » _____ 201 թ. մինչև « _____ » _____ 202 թ.) ուսուցման

_____ մասնագիտությամբ _____ որակավորմամբ կրթություն (դասիչը, անվանումը)

ստանալու համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Համալսարանը պարտավոր է

2.1.1. Ուսանողին հրամանագրելիս և նրա ուսումնառության ընթացքում ղեկավարվել ՀՀ գործող օրենսդրությամբ, ՀՀ ԿԳՄՍ նախարարության համակարգում գործող ընդունելության, տեղափոխման, ուսանողական իրավունքների վերականգնման, ուսանողական նպաստի և կրթաթոշակի տրամադրման հարցերը կարգավորող իրավական ակտերով և Համալսարանի «Ներքին կարգապահական կանոնների» դրույթներով:

2.1.2. Կազմակերպել և ապահովել Ուսանողի կողմից հիմնական կրթական ծրագրի յուրացումը տվյալ մասնագիտության գծով:

2.1.3. Ուսանողին տեղափոխել հաջորդ կուրս նախորդ ուսումնական տարվա ուսուցման ծրագրի լրիվ ավարտից հետո:

2.1.4. Ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու, ակադեմիական արձակուրդի պատճառներով ուսումնառությունը դադարեցնելուց հետո ուսանողական իրավունքները վերականգնված ուսանողին, նրա համաձայնությամբ, տեղափոխել հարակից մասնագիտության այն դեպքում, երբ սույն պայմանագրում նշված մասնագիտությամբ ուսուցումը Համալսարանի կողմից շարունակելն անհնարին է:

2.1.5. Ուսանողի կողմից ՀՀ պետական չափորոշիչներով նախատեսված ավարտական պետական որակավորման քննությունները հանձնելուց և ավարտական որակավորման աշխատանքը պաշտպանելուց հետո ուսանողին տալ բարձրագույն կրթության մասին պետական նմուշի փաստաթուղթ, ինչը կհավաստի սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների ավարտ:

2.2. Համալսարանն իրավունք ունի

2.2.1. Պայմանագիրը լուծել ուսանողի կողմից անհարգելի բացակայությունների, անբավարար ակադեմիական առաջադիմության, պայմանագրային պարտավորությունները, մասնավորապես, մեկ կիսամյակի ընթացքում ուսման վարձավճարի ամենամսյա վճարումները պայմանագրով սահմանված ժամկետից ուշացնելու հիմնավորմամբ՝ ՀՀ գործող օրենսդրությամբ և Համալսարանի՝ «Ներքին կարգապահական կանոններով» նախատեսված այլ դեպքերում:

2.3. Ուսանողը պարտավոր է

2.3.1. Ժամանակին վճարել մատուցվող ծառայությունների վճարը՝ մինչև հաջորդ ամսվա 5-ը՝ յուրաքանչյուր ամիս վճարելով ուսման վարձի 25%-ը:

2.3.2. Ժամանակին կատարել ուսումնական պլանի և ծրագրերի պահանջները:

2.3.3. Մինչև քննաշրջանը կատարել ուսումնական պլանով և առարկայական ծրագրերով նախատեսված ստուգողական և լաբորատոր աշխատանքները:

2.3.4. Կատարել ուսանողների համար Համալսարանի «Ներքին կարգապահական կանոններով» նախատեսված պարտականությունները և պարտավորությունները:

2.3.5. Իր ազգանվան, անվան, հայրանվան, հասցեի և հեռախոսահամարի փոփոխության դեպքում տասնօրյա ժամկետում տեղեկացնել համալսարանին:

2.3.6. Խնամքով վերաբերվել համալսարանի գույքին:

2.3.7. Հաճախել պարտադիր համարվող դասախոսություններին, սեմինար (գործնական) պարապունքներին:

2.4. Ուսանողն իրավունք ունի

2.4.1. Օգտվելու ՀՀ «Կրթության մասին» օրենքով, ՀՀ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքով, Համալսարանի «Ներքին կարգապահական կանոններով» նախատեսվող իրավունքներից:

2.4.2. Ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու, ակադեմիական արձակուրդի պատճառներով ուսումնառությունը դադարեցնելուց հետո ուսանողական իրավունքները վերականգնելիս, իր համաձայնությամբ, տեղափոխել հարակից մասնագիտության այն դեպքում, երբ սույն պայմանագրում նշված մասնագիտությամբ ուսուցումն ընդհատվել է կողմից շարունակելն անհնարին է:

2.4.3. Ուսանողը իրավունք ունի միանվագ վճարելու 1-ից ավելի ամիսների վճարը :

2.4.4. Ստանալու կրթություն պետական կրթական չափորոշիչներին համապատասխան և ձեռք բերելու գիտության, տեխնիկայի և մշակույթի զարգացման ժամանակակից մակարդակին համապատասխան գիտելիքներ:

2.4.5. Ստանալու ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցուման պետական նպաստ և կրթաթոշակ՝ օրենքով սահմանված կարգով:

3. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Ուսման վճարի մեջ ներառվում է ուսուցման հետ կապված ծախսերի լրիվ փոխհատուցումը:

3.2. Ուսուցման արժեքը յուրաքանչյուր կուրսի համար _____ հազար դրամ է:

3.3. Ուսանողը սույն պայմանագիրը կնքելուց հետո 10 օրվա ընթացքում պարտավոր է վճարել առաջին ամսվա գումարը. այն է՝ կիսամյակի 25%-ը: Այն դեպքում, եթե ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա ժամկետի ավարտի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը:

3.4. Ուսանողը մինչև հաջորդ ամսվա 5-ը՝ յուրաքանչյուր ամիս վճարում է ուսման վարձի 25%-ը:

4. ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Սույն պայմանագիրը կնքվում է երկու հավասար իրավական ուժ ունեցող օրինակից՝ յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկ օրինակ:

4.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն երկկողմանի ստորագրելու պահից:

4.3. Պայմանագրի մեջ փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ գրավոր ձևով, որը կհանդիսանա սույն պայմանագրի բաղկացուցիչ անբաժանելի մասը:

ՈՒՍԱՆՈՂ

«Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական
համալսարան» հիմնադրամ
377200 ՀՀ ք. Վանաձոր Տիգրան Մեծի 36
Ռեկտոր՝
Ռուստամ Ռաֆիկի Սահակյան

(ստորագրություն)

(անուն, հայրանուն, ազգանուն)
Անձանգրի սերիա _____
տրված «__» _____ 20__թ.
գրանցված _____
Հեռ. _____

(ստորագրություն)

Ստացա մեկ օրինակը _____
(ստորագրություն)